# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 փետրվարի 2020թ. N 34-Ա

ՀԱՄԱՅՆՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ԹԱՂԱՄԱՍ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔՈԹԵՋ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի № 88 որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով Մայյա Վարշամի Գուլբանդյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Փոփոխել Մայյա Վարշամի Գուլբանդյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Հայրենադարձ թաղամաս 3 (վկայական N 1617455, ծածկագիր 07-003-0044-0008, հողամասի մակերեսը՝ 0.048 հեկտար) հասցեում գտնվող բնակելի նպատակային նշանակություն քոթեջ բնակարանի գործառնական նշանակությունը՝ դարձնելով քոթեջ:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՅԱՆ

2020թ. փետրվարի 01
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 փետրվարի 2020թ. N 35-Ա

## ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ղեկավարի հայտը՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Բյուրեղավան համայնքում (բնակավայրեր՝ քաղաք Բյուրեղավան, գյուղ Նուռնուս, գյուղ Ջրաբեր, ծածկագիր՝ 07-003-, 07-051-, 07-055-) ոռոգման համակարգի կառուցման, վերակառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. փետրվարի 04
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 փետրվարի 2020թ. N 36-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 23/27 ԲՆԱԿԱՐԱՆԸ

ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ, 55-րդ կետերի և հիմք ընդունելով Համիկ Խանզադյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Համիկ Խանզադյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 23/27 բնակարանի (վկայական՝ N 014708, տրված 1998 թվականի մայիսի 13-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Երիտասարդական փողոց 23 շենք 27 բնակարան:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. փետրվարի 04
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 փետրվարի 2020թ. N 37-Ա

### ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի՝ որոշում եմ.

Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում 2020 թվականի փետրվարի 10-ին, ժամը 17:00-ին հրավիրել համայնքի ավագանու թիվ 2 արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգային հարցերով.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

2.«Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը և դրա 2019 թվականի կատարողականը հաստատելու մասին:

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 113 բնակարանը Գենադիկ Վլադիմիրի Վարդանյանին անհատույց օտարելու մասին:

4.Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին պաշտոնից ազատելու համաձայնություն տալու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. փետրվարի 04
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 փետրվարի 2020թ. N 38-Ա

### ԱՐՄԵՆ ՄԱԿՅԱՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Արմեն Մակյանի հայտը և վճարման անդորրագրերը՝ որոշում եմ.

1.Արմեն Մակյան անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար 43088161) տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց, 32/73 հասցեում գտնվող 95 քմ մակերեսով տարածքով առևտրի օբյեկտում՝ 2020 թվականի հունվարի 01-ից մինչև մարտի 31-ի համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. փետրվարի 04
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 փետրվարի 2020թ. N 39-Ա

## ԱՂԱՎՆԻ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Աղավնի Կուրղինյանի հայտը և վճարման անդորրագրերը՝ որոշում եմ.

1.Աղավնի Կուրղինյան անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար 43071255) տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Վազգեն Ա Վեհափառի փողոց, 18 շենքին հարակից հասցեում գտնվող 41 քմ մակերեսով տարածքով առևտրի օբյեկտում՝ 2020 թվականի հունվարի 01-ից մինչև դեկտեմբերի 31-ի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. փետրվարի 04
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 փետրվարի 2020թ. N 40-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Գարեգին Աշիկի Սաղաթելյանի լիազոր անձ Սմբատ Սիմոնի Նահապետյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Նուռնուսի տեղամաս «Սևան» այգեգործական ընկերություն թաղամաս 3 թիվ 34 հողամասի (ծածկագիր՝ 07-051-0154-0017) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Սևան թաղամաս 3-րդ փողոց 34:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. փետրվարի 05
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 փետրվարի 2020թ. N 41-Ա

### ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 25-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 138-րդ, 139-րդ կետերի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի դիմումը՝ որոշում եմ.

1.Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Վազգեն Սարգսյան և Կոտայք փողոցների հատման մասում գտնվող հողամասում (ծածկագիր՝ 07-003-0037-) կառուցված պուրակի (պուրակի կազմում առկա են հասարակական շինություններ, ցանկապատեր, նստարաններ, խաղահրապարակներ, հարթակներ, ցայտաղբյուրներ, մայթեր և այլ կառույցներ ու շինություններ) համար Բյուրեղավանի համայնքապետարանին տալ ավարտական ակտ (շահագործման թույլտվություն):

2. Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանին՝ համայնքապետարանի 900105202163 հաշվեհամարին վճարել 20000 (քսան հազար) դրամ տեղական վճար՝ շահագործման թույլտվության ձևակերպման համար:

3.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ գրանցում կատարելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. փետրվարի 05
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 փետրվարի 2020թ. N 42-Ա

### ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 04-Ի N 37-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ որոշում եմ.

1.Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 04-ի «Բյուրեղավան համայնքի ավագանու թիվ 2 արտահերթ նիստ գումարելու մասին» N 37-Ա որոշման մեջ կատարել լրացում՝ որոշման հիմնական մասը 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ և 6-րդ կետերով.

«5.Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թեկնածուին համաձայնություն տալու մասին :

6.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 106 և 109 բնակարանները Գայա Վոլոդյայի Չոփուռյանին անհատույց օտարելու մասին»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. փետրվարի 07
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

(մարզը, համայնքը)

# ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

## (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 3 04 փետրվարի 2020թ.

Օբյեկտ Բյուրեղավան համայնքում ոռոգման համակարգի կառուցման, վերակառուցման,

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերակազմակերպում, գործառնական նշանակության փոփոխություն)

_______________________________________________

(հակիրճ բնութագիրը, հզորությունը)

_______________________ նախագծային փաստաթղթերի մշակման համար:

«Աշխատանքային նախագիծ», (II կատեգորիա),

(մակարդակության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան (բնակավայրեր ք.Բյուրեղավան, գ.Նուռնուս, գ.Ջրաբեր (ծածկագիր՝ 07-003-, 07-051-,07-055-) հասցե

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքապետարան (պետական ռեգիստր վկ. N42181995866, ծածկագիր 22185816)

(բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը հայտ և հատակագծեր

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված

կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը _______________

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

## ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող անհրաժեշտ մասշտաբով՝ Մ 1:500)*

1. Հողամասը գտնվում է — գյուղատնտեսական նպատակային նշանակության և բնակավայրերի նպատակային նշանակության հողամասեր.

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը — ըստ նախագծի

(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա))

3. Հողամասի առկա վիճակը — ազատ, հարթ, անբարենպաստ տարածք, առկա է հին ոռոգման համակարգ

(ռելիե֖ի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները — համայնքային նշանակության ճանապարհներ

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) — հարակից տարածքով անցնող ստորգետնյա մալուխ, ջրագիծ, կոյուղագիծ, էլեկտրամատակարարման,էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր, գազամատակարարման համակարգ

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր — համայնքային սեփականության հող, ճանապարհ, (հարևաններ ծածկագրերով)

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) — ---------------

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

<u>նախագիծը մշակել համաձայն տրված առաջադրանքի</u>

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

<u>ղեկավարվել ՀՀ գործող նորմերին համապատասխան ըստ միջավայրի պայմանների, հաշվի առնել միջավայրի քաղաքաշինական առանձնահատկությունները, հատակագծային լուծումները ըստ պատվիրատուի առաջադրանքի.</u>

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից առաջարկությունները ճակատների ձևավորման, սանդղակի, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

*<u>Ապահովել փողոցի կառուցապատման գիծը</u>*

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

_____-----____________________

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն)

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

____________________________________

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին տոկոսներով (%)

__________________________%________________

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին տոկոսներով (%)

____________________________________

9.7. այլ պահանջներ

<u>տարածքում տեղադրել ինֆորմացիոն վահանակ</u>

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

_______________-----____________________

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

_______________-----____________________

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

*<u>համաձայնեցնել հիմնական կազմակերպությունների հետ</u>*

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում

Կցվում է <u>«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» փակ բաժնետիրական ընկերություն</u>

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում Կցվում է «ՀԱՅԷԼՑԱՆՑ» ՓԲԸ «Գեղամա» մասնաճյուղ, «Նաիրի» էլեկտրական ցանցեր
(համանման մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում Կցվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Աբովյանի ԳԳՄ
(համանման մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը Կցվում է ______
(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված էլեկտրոնային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ ______

12.6. աղբահանություն Կնքել համապատասխան պայմանագիր աղբահանություն կազմակերպող իրավասու կազմակերպության հետ

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում «Բնակավայրի կանաչապատում և բարեկարգում» ՀՕԱԿ կազմակերպել ջրահեռացում
(օբյեկտի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում ապահովել հարակից տարածքի մաքրությունը, կանաչապատումը, բարեկարգումը
(կանոնակարգային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, ցոլվարդ և այլն)

15. Շինարարական նյութեր Մետաղական և պոլիէթիլենային խողովակաշարեր Բար.Երկաթ/բետոն, տուֆ, բազալտ, ավազ, խիճ և այլն ըստ համաձայնեցված նախագծի
(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները սահմանների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ շինարարության ընթացքում ցանկապատել տարածքը և տեղադրել անհրաժեշտ այլ պաշտպանական միջոցներ
(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները
(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ ______

19. Շրջակա միջավայրի պահպանում չիրականացնել վնասակար միջոցառումներ, որը կթողնի բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա, ըստ գործող նորմերի
(շրջակա միջավայրը վնասակար ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում ճանապարհի երթևեկելի մասում չտեղադրել երթևեկությանը խոչընդոտ հանդիսացող պայմաններ
(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը «Էսքիզային նախագիծ» , 12 (տասներկու) ամիս
(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի, երաշխավորությամբ՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում ______
(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

| | |
|---|---|
| 24. Հասարակական քննարկումներ | ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 660 որոշման պահանջների համաձայն<br>(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով) |
| 25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում | նախագիծը համաձայնեցնել Բյուրեղավանի համայնքապետարանի հետ և ինժեներական ենթակառուցվածքի տեղաբաշխման անհրաժեշտության դեպքում պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել տվյալ ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ՝ մինչև նախագծային աշխատանքների սկիզբը<br>(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ) |
| 26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում | |
| 27. Այլ պայմաններ | անհրաժեշտության դեպքում սեփականաշնորհված հողամասերով ոռոգման գծեր անցկացնելու դեպքում՝ ձեռք բերել սեփականատերերի համաձայնեցումները: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ.Տ. Ռ. [illegible]
հեռ. 0222 6 52 03

ձև 3-7

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՀԱՄԱՅՆՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ**

(ՀՀ մարզը, համայնքը)

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ)

N1 05 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թ.

Կառուցապատող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարան հեռ.022265203 byureghavan.kotayq@mta.gov.am (պետ ռեգիստրի վկայական N42181995866,ծածկագիր 22185816) կողմից

(իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Կառուցված Պուրակ (պուրակի կազմում առկ՝ հասարակական շինություններ , ցանկապատեր , նստարաններ խաղահրապարակներ, հարթակներ ցայտաղբյուրներ, մայթեր և այլ կառույցներ ու շինություններ),

(օբյեկտի անվանումը)

որը գտնվում է ՀՀ Կոտայքի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Վազգեն Սարգսյան և Կոտայք փողոցների հատման մասում գտնվող հողամաս (ծածկագիր 07-003-0037-) հասցեում՝

(օբյեկտի տեղադրությունը, հասցեն)

համարվում է ավարտված և պատրաստ է շահագործման, որի՝

1. նախագծային փաստաթղթերը մշակվել են «ՎԱ -ՄԱՅՆԴ» սահմանափակ
(նախագծային կազմակերպության անվանումն օրենքով սահմանված դեպքերում՝ լիցենզիայի համարը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, լիցենզիայի համարը)
պատասխանատվությամբ ընկերության (լիցենզիա՝ N 15731, տնօրեն՝ Հ. Վարդանյան) կողմից.

2. շինարարությունն սկսվել է ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի կողմից
(շինարարության թույլտվություն տվող մարմնի անվանումը)

տրված 29.09.2017 թ. N 02 շինարարության թույլտվությունների համաձայն.

3. շինարարությունն իրականացվել է «ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ի կողմից
(գլխավոր կապալառուի անվանումը)

4. օբյեկտի հիմնական ցուցանիշներն են՝ 1 մեկ հարկանի կառուցված շինության H=2.65-2.83մ. (ցանկապատեր , նստարաններ խաղահրապարակներ, հարթակներ ցայտաղբյուրներ, մայթեր)

5. հատուկ պայմանները

ՀԻՄՔԵՐ՝

1) կառուցապատողի դիմումը 04_02_ 2020 թ.
2) ընդունող հանձնաժողովի ակտը 05. 11. 2019 թ.
3) կատարողական փաստաթղթերի ցանկը կամ շինության տեխնիկական վիճակի մասին համապատասխանության հետազննության դրական եզրակացությունը 158 թերթ տեխնիկական եզրակացություն:

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավար

(ստորագրությունը) Հ. Բալայան
(անունը, ազգանունը)

Կ. Տ. Դ. Դանիելյան